ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

№_____ «_____»_____20 թ.

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ի լրումն 2022 թվականի հունվարի 27-ի թիվ ՔՏՄ/01.03/1179-22 գրությամբ ներկայացված ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2022թ. կարիքների համար անշարժ գույքի վարձակալության ծառայությունների ձեռքբերման գնման հայտի հայտնում եմ Ձեզ, որ Տեսչական մարմնի կողմից զբաղեցրած ք. Երևան, Եղվարդի խճուղի 111 հասցեում գտնվող անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետը ավարտվել է 2021 թվականի դեկտեմբերի 31-ին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասի ՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ 2021 թվականի փետրվարի 2-ին կնքված թիվ 553 վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձատու «Արաքս» ԲԲԸ-ի կողմից առարկություն չի ներկայացվել և վարձակալը շարունակել է օգտվել անշարժ գույքից, ուստի 2021 թվականի փտրվարի 2-ին կնքված թիվ 553 վարձակալության

0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. , Ա. Միկոյան 109/8, էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռ.՝ (+374 60) 86 66 60

պայմանագիրն օրենքի ուժով ճանաչվել է վերսկսված ՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով:

Առդիր 6 էջ:

Հարգանքով՝ **ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆ**

X _____

Կատարող՝ ՔՏՀԱՏՄ բյուջետային գործընթացի պատասխանատու
Ա.Մարգարյան
Հեռ. +37460866666 (ներքին 1101)